

XIV ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՆԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Անի քաղաքում և անեցիների կողմից այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը¹ նոր փաստերով ու տեղեկություններով ղգալիորեն լրացնում է քաղաքի պատմությունը: Հայտնի է, որ աղբյուրագիտական նյութերը սակավ են Անիի հատկապես XIV դարի պատմության վերաբերյալ: Բավական է նշել, որ այդ պատմաշրջանից գրեթե չունենք որևէ հայ պատմիչի երկ, ուր հիշատակվեր նախկին մեծահռչակ մայրաքաղաքը²: Այս պայմաններում, որպես գրավոր սկզբնաղբյուրներ առաջնակարգ նշանակություն են ստանում վիմագիր արձանագրություններն ու ձեռագրերի հիշատակարանները:

Դեռևս XIII դարի կեսերից մոնղոլական ներխուժման հետևանքով Անիի բնակչության մի ստվար հատվածը թողել էր հայրենի քաղաքը և բռնել զանգվածային արտագաղթի ուղին³: Անին գտնվում էր մոնղոլների տիրապետության տակ, բայց մինչև XIV դարի կեսերը ուղղակիորեն ենթարկվում էր Զարայանների տոհմի ներկայացուցիչներին: Քաղաքը քայքայիչ հարված էր ստանում իշխողների ծանր հարկային քաղաքականությունից: Քանի որ երկրում հստակ կարգ ու կանոն չկար, հարկահավաքները ապօրինաբար մեծացնում էին գանձվող հարկերի չափերը, որոնք բնակչության համար դառնում էին անտանելի: Անիում Մանուչեի մզկիթի վրա Աբու-Սալիդ խանի (1316—1335) թողած պարսկերեն արձանագրությունը վառ վկայությունն է այն բանի, որ քաղաքից կատարվող արտագաղթը լայն չափեր էր ընդունել և սպառնալից բնույթ էր կրում⁴:

Եթե դարասկզբին Անիում տիրող իրավիճակը բնորոշվում է հիշյալ արձանագրությամբ, ապա դարավերջի իրականության համար հատկանշական է 1398 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում տրված պատկերը. «...դժմանց գտուն այրեցին, զոմանց զվաստակ կերան և զպահուստն զամէն գտան

¹ Ստորև ամբողջական կամ մասնակիորեն ներկայացված հիշատակարաններից չորսը հրատարակվում են առաջին անգամ:

² Բացառություն է թուվմա Մեծուհեցու երկը, ուր կանկ թեմուրի 1394—95 թթ. արշավանքի կապակցությամբ նշվում է. «...նստաւ ի վերայ բերդին Բագրատունույ»: Խոսքը հավանաբար վերաբերում է Անիին (Թ ո վ մ ա Մ ե ծ ո ռ ե ց ի. Պատմութիւն Լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց. Փարիզ, 1860, էջ 46: Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Անիի պատմություն. գիրք երկրորդ, Երևան, 1982, էջ 334):

³ Ղ. Ա լ ի շ ա ն. Հայաստանում. մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 575—581: Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. հ. Ա, Երևան, 1964, էջ 165—167:

⁴ Արձանագրության մեջ մասնավորապես ասվում է. «...թող բացի տաղմայից և արդարացի մաքսից ոչինչ չառնեն և թող ոչ ոքից խայանի, նեմերիի և թարխի պատրվակով ոչինչ չպահանջեն. որովհետև սրանից առաջ Անի քաղաքում և Վրաստանի այլ շրջաններում խալանի, նեմերիի անիրավացի հատկացումների ու թարխի պատրվակով ապօրինի տուրք էին առնում և բռնություն էին գործադրում. և երկիրն սկսեց ամայանալ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղավ և քաղաքի շրջանի տանուտերերը խալանի ու դժնադրի պատճառով թողին իրենց անշարժ ու շարժական գույքն ու ընտանիքը և հեռացան...» (В. Бартольд. Персидская надпись на стене Анийской мечети Мануче.—Анийская сергия, № 5, СПб., 1911, с. 6—7):

և զանաոիկ մամոց Անին առին և զայն ու խնայեցին, յետո՝ հաւկապահան-
հուրեամբ արարին իբր զկողոպուտ»⁵:

Անիից արտագաղթողների թվում էին նաև գրիչներն ու մանրանկարիչ-
ները, որոնք քայքայված քաղաքում ապրուստի միջոց չգտնելով հեռանում
էին այնպիսի վայրեր, ուր գոյատևման համեմատաբար բարենպաստ պայ-
մաններ կային: Չպետք է մոռանալ նաև, որ այդ շրջանում մահմեդականու-
թյունը ընդունած մոնղոլները կրոնական հալածանքներ էին սկսել քրիստոն-
յաների՝ հատկապես հայ եկեղեցու սպասավորների նկատմամբ, իսկ գրչու-
թյամբ ղեկավարողները հիմնականում վաճառում ու եկեղեցիներում էին աշ-
խատում: Նրանց համար Անի քաղաքն այլևս ապահով հանգրվան չէր: XIV
դարում բաղմաթիվ անեցի գրիչներ, ճարտարապետներ և այլ մտավորական-
ներ արդեն բնակություն էին հաստատել ոչ միայն Հայաստանի տարբեր շր-
ջաններում և Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում, այլև հա-
րևան երկրներում:

Պարսկաստանի նորակառույց Սուլթանիա քաղաքում էին հաստատվել
մի շարք անեցիներ, որոնց մեջ էր նշանավոր գրիչ, մանրանկարիչ և կազմա-
րար Մխիթար Անեցին: Նրանից հայտնի առաջին ձևագիրը վերաբերում է
1321 թ. (Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), № 2961), գրված «նեղ և ի
նսև, դռն և դանդաղ...»⁶: Հիշատակարանում չի նշված գրչության վայրը,
այլևս այն և դանդաղ...»⁶: Հիշատակարանում չի նշված գրչության վայրը,
Սյուս ձևագիրը, որն Աստվածաշունչ է, գրված է 1338 թ., Սուլթանիայում
(ՄՄ, № 4429): Այն բավական ընդարձակ չափածո հիշատակարան ունի, որ-
տեղ տաբատիր անեցի գրիչը կսկիծով է հիշում իր կորցրած հարազատներին
և ծննդավայրը՝ հայրենի Անի քաղաքը.

[3] Իշեմ զգաւառն իմ հայրենին,
Զմայրաքաղաք ամուրն Անին⁷:

Մխիթարից հայտնի երրորդ ձևագիրը Ավետարան է, գրված 1357 թ., հավա-
նաբար դարձյալ Սուլթանիայում (ՄՄ, № 7744): Հիշատակարանում գրիչն
իրեն շատ ծեր է անվանում. «աղաչեմ... անմեղադիր լինել սխալանաց և խո-
շորութեան գրիս, վասն զի կարի յոյժ իմն ծեր անձամբ աշխատեցայ ի գրելն
սորայ»⁸: Մխիթար Անեցին կյանքի զգալի մասն անց է կացրել Անիից հեռու,
բայց որպես գրիչ և մանրանկարիչ նախնական կրթությունն ու փորձը ձեռք է
բերել հարազատ քաղաքում:

1326 թ. Սուլթանիայում գրված մի ձևագրի հիշատակարանում պատմը-
վում է Անիից այստեղ տեղափոխված մեկ այլ ընտանիքի մասին: Ձեռագրի
գրիչն է Կարապետը, ստացողը՝ Գրիգոր Անեցին: Հիշատակարանում պարզո-
րոշ նշվում է Անիից կատարվող արտագաղթի պատճառը. «...եւ ուներ սա
(Գրիգորը—Կ. Մ.) զբնակութիւն իւր ի մեծ մայրաքաղաքին Անի: Արդ վասն
աւերման աշխարհին իւրեանց, եւս առաւել վասն մայրաքաղաքին Անոյ,
եկեալ բնակէր ի տեղիս յայս»⁹: Հիշատակարանում Գրիգորի ընտանիքի ան-
դամների և այլոց հետ մեկտեղ հիշվում է նաև Մխիթար Անեցին, որին գրիչ
Կարապետն իր հոգևոր եղբայրն է համարում, խնդրելով հիշել. «Նա եւ զհոգե-
ւոր եղբայրն մեր զՄխիթար Անեցի, զերախտաւորն մեր...»¹⁰:

⁵ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան,
1950, էջ 621 (այս և հաջորդ հիշատակարաններում կատարված ընդգծումները մերն են—
Կ. Մ.):

⁶ Նույն տեղում, էջ 171:

⁷ Նույն տեղում, էջ 428:

⁸ Նույն տեղում:

⁹ Ն. Պ ո դ ա ր յ ա ն. Մայր ցոցակ ձեռագրաց Սրբոյ Հակոբյանց. հ. Բ, Երուսաղեմ, 1967,
էջ 420:

¹⁰ Նույն տեղում:

Անի քաղաքից հեռացողներն իրենց հետ վերցնում էին նաև ձեռագրեր, որոնց մի մասը երևի հենց քաղաքում էր ստեղծված: Օտարություն և կարիքի մեջ գտնվող քաղաքացիներից ոմանք հաճախ ստիպված էին լինում վաճառել ձեռագրերը: Նման մի փաստ է արձանագրված Մաշտոցի անվ. Մատենադարանի № 9450 ձեռագրի (Ավետարան)՝ XIV դարի վերջերին գրված հիշատակարանում: Ուշագրավ է, որ ձեռագիրն օտարող Մկրտիչ Անեցին շեշտում է, թե հարկադրանքի կամ բռնության պատճառով չի վաճառում ձեռագիրը, հետևաբար պետք է կարծել, որ կային շատերը, որոնք իրենց ձեռագրերը վաճառում էին հենց այդ պատճառով: Հիշատակարանը գրված է Բջնիում, Հովհաննես դրչի ձեռքով: Ներկայացնում ենք որոշ համառոտմամբ. «...ես Մկրտիչ Անեցի, որդի Ստեփաննոսի եկի յաթոս Բջնոյ և իմ սրտի յաժադութեամբ գիմ հալալ արդեամբ գնած Աւետարանս ծախեցի Նրեմիայ աբեղին և իւր եղբարն Սարգսին, ոչ ի հարկէ, կամ ի բռնութենէ, այլ իմ սրտի յաժադութեամբ: ...Հասաւ դինն լի և անթերի ԲՃԾ (250) դահեկան, որ անէ ի էսն ՇԻԵ (125) դահեկան: Վկայ գրույս պարոն Սատրգիս և Թումաշայ, Ստեփաննոս, Հայրապետ եւ ես Յովհաննէս, որ զգիրս գրեցի»¹¹:

Անեցիներից շատերն էլ հաստատվել էին Նրեանում: Հիշարժան է հատկապես Ս. Աստվածածին եկեղեցու մի ինքնատիպ վիմագիր արձանագրությունը, ուր տարագիր անեցին իր սիրելի քաղաքի կործանման ցավն է արտահայտել. «Շաբալդինս Անեցի յիշեցէք ի բարին, որ Աստուած զձեզ յիշէ: ՊԺԳ. (1364) Աստուած գԱնու ավիւրդն ավրէ»¹²:

Սակայն XIV դարի Անիի վերջնական ամայացման ժամանակաշրջանը չէր: Քաղաքը գեո որոշակիորեն պահպանում էր իր գեմքը, մանավանդ դարի առաջին կեսին: Անիում կատարվում էին որոշ շինարարական աշխատանքներ, հատվում էին դրամներ¹³: Հիշատակարաններում եղած տարբեր կարգի տեղեկությունները ավելի են հարստացնում մեր գիտելիքները քաղաքի վիճակի վերաբերյալ:

1313 թ. Հակոբ գրչի, Շիրակի Մագույս կոչվող բնակավայրում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանից երևում է, որ այդ ժամանակ քաղաքում կացությունը համեմատաբար բարվոք էր. «...գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ... Յակոբոսի սուտ ու մուտ գրագրի: ...Եւ էր թուականն Հայոց ԶԿԲ (1313)... ի հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Յովհաննիսի մեծի որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ և ի յաղգէ Լուսաւորչին Հայաստանեայց: Բայց գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Շիրակայ, ի գիւղս քաղաքիս որ կոչի Մագույս, ընդ հովանեաւ սուրբ և սքանչելագործ Նշանիս: Եւ ի տերութեան տեղոյս մեծի և Փանլաւունի, քաջ և րնտիր պատերազմողի, կայսերակերպի որոյ անուն Զաֆարիա յորջորջի, և է հէջուպ և առաջնորդ տանս մեծի աթապակ ամիրսպասալար Շահնշահի, և ամուսնոյ նորին պատրոն Խորիշահի, որ է քոյր Շահնշահի, և գղեռաբոյս ծաղկեալ գաւակացն Միրագրծիլին և Սարգսին և Մամախաթունին...»¹⁴:

11 ՄՄ, ձեռ. № 9450, էջ 374բ, հրատարակվում է տառնիս անգամ:

12 Կ. Ղաֆաղարյան. Նրեան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները. Նրեան, 1975, էջ 141:

13 Թ. Հակոբյան. Նշվ. աշխ., էջ 303—331:

14 Ձեռագիրը պատկանել է Թիֆլիսաբնակ Ա. Էֆենձյանին: Հիշատակարանը պահպանվել է Մ. Տեր-Մովսիսյանի անտիպ ցուցակում և Ղ. Փիրղալեմյանի մոտ (ՄՄ, ձեռ. № 5415, թ. 69): Վերջինում այն ավելի ամբողջական է, սակայն որոշ տարբերություններ կան: Մ. Տեր-Մովսիսյանի մոտ չի նշվում դավառի անունը. «գրեցաւ... ի գաւառիս ի գիւղաքաղաքին որ կոչի Մագույս»: Տարբերություններով են նաև Զաֆարիա Նեջուպի ազգականների անունները. Մ. Տեր-Մովսիսյան՝ «Ստրիշահ, Միրագրծիլի, Սարգիս», Ղ. Փիրղալեմյան՝ «Խորին շահ, Լմաթագրծիլի, Լագիս»: Կարծում ենք առաջին դեպքում անուններն ավելի ճիշտ են ընդօրինակված: Հիշատակարանը Փիրղալեմյանի աշխատությունից ծանոթ է հղել Գ. Հովսեփյանին (Խաղբակյանը կամ Պոռչյանը հայոց պատմության մեջ. Վաղարշապատ, 1923, էջ 15), վերջինիս միջոցով էլ Հ. Մանանդյանին (Նրկեր. Գ. Նրեան, 1977, էջ 182):

Նույն հիշատակարանը միակ աղբյուրն է, ուր տեղեկություն է պահպանվել Շահնշահ II-ի¹⁵ տան կարևոր պաշտոնյա, հեջուր Ջաքարիա Պահլավունու և նրա ընտանիքի մասին: Սակայն Անիի պատմության համար կարևոր փաստ է նաև քաղաքի եպիսկոպոս Հովհաննես Պահլավունու մասին եղած հիշատակությունը, որովհետև վերջինս ներկայացվում է որպես ձեռներեց եկեղեցական գործիչ («որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ»):

XIV դարում Անիում գրված, կամ նկարագրված ոչ մի ամբողջական ձեռագիր առայժմ հայտնի չէ: Սակայն պահպանվել են քաղաքում գրված մի շարք հիշատակարաններ: Դրանցից է հետագայի ստացող անեցի Կիրակոս երեցի հիշատակարանը, գրված մի ձառնով¹⁶. «...լիշեսչիք զյետի ստացալդ դրոց զպիսակոս երէց] և զամուսին իմ զԳայինաէ... Բայց գրեցաւ սայ ի յԱնի, ի թվ. 272 (1342), ի հալալ արդեանց իմոց, ի յիշատակ ինձ և իրից-կնոջն և ծնողաց իմոց...: Ի թվ. 272 (1347) ի յնգրնկան եկի իսղաղութեամբ և եղև մահ տարածամ և Քրիստոսի փառք յաւ[իտեան]»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, ստացողը հիշատակում է երկու թվական: XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուում սույն հիշատակարանը տեղադրված է 1347 թ. տակ¹⁸: Սակայն կարծում ենք, որ Կիրակոսի կողմից ձեռագիրն ստանալու, ուստի և հիշատակարանի գրության տարին առաջին թվականն է՝ 1342 («գրեցաւ սայ... ի թվ. 272...»), իսկ երկրորդ թվականը հավանաբար վերաբերում է մահ տարածամին (համաճարակ), որը տեղի է ունեցել Անիում, Կիրակոսի ներկայից վերադառնալուց հետո՝ 1347 թ. («ի թվ. 272 ի յնգրնկան եկի... և եղև մահ տարածամ»):

Անիում գրված հաջորդ հիշատակարանն ավելի ծավալուն է և պատմադրական մեծ արժեք ունի: Այն գրված է անեցի մեծատուն պարոն Ասիլի և նրա կնոջ՝ Ըռուզ խաթունի անունից, ներսես գրչի ձեռքով, 1357 թ.: Ավետարանը, որի մեջ տեղավորված է հիշատակարանը (ՄՄ, № 6764), գրվել և շրջադրվել զարդարվել էր 1283 թ. Սկևռայում, Ստեփանոս գրչի կողմից, Կիրակիայի հայոց Կեռան թագուհու պատվերով, նրա որդու՝ Հեթումի ձեռնարկով: Դժվար է ասել, թե ժամանակի քաղաքական ելևէջների բովանդակում ինչպես էր Կեռանի պատվիրած Ավետարանը Անի հասել: Սակայն Ասիլի հիշատակարանից երևում է, որ նա ձեռք է բերել ձեռագիրը, երբ այն արդեն նորոգման կարիք էր գգում: Ասիլը նորոգել է տվել մատչանը, ապա նվիրել Անիի Առաքելոց եկեղեցուն:

Հիշատակարանում տրված է Անիի քաղաքական կացության համառոտ նկարագիրը. 1350-ական թթ. կեսերին մոնղոլների կողմից քաղաքի գրավումն ու ավերումը, Անիի իրավական տիրոջ՝ Ջաքարյան Շահնշահ III-ի մահապուրծ փախուստը և այլն²⁰, փաստեր, որոնք պատմագրությանը հայտնի են միմիայն այդ հիշատակարանի շնորհիվ: Այդ է պատճառը, որ տարբեր տարիների նշված հիշատակարանից հատվածներ են հրատարակել Ղ. Ալի-

15 2. Մանանդյանը գրում է. «Աղբյուրների մեջ հիշատակված է ամիրսպասալար Ջաքարեի որդի Շահնշահի տան հեջուրը և առաջնորդը՝ «քաջ և ընտիր պատերազմող» Ջաքարիա Պահլավունին» (նույն տեղում): Բայց վերջինս ոչ թե Ջաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ I-ի, այլ որա թոռան՝ Շահնշահ II-ի (մահացել է 1320 թ.) ժամանակ է ապրել, քանի որ հիշատակվում է 1313 թ.:

16 Ձեռագիրը պահվել է Թրիլիոսում, պրոֆեսոր Դ. Պ. Գորգենի հավաքածուում, որտեղից հիշատակարանը քաղել է Լ. խաչիկյանը (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 353):

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 Ա. Մ ա թ ե ո ս յ ա ն. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1984, էջ 533:

20 XIV դարի կեսերին մոնղոլ Մելիք Աշրաֆի վարած բռնակալական քաղաքականությունը ծանր հարված է հասցնում հայ ֆեոդալական տների ու ժառանգորդ ներկայացուցիչներին: Ջաքարյաններից իսկում են նրանց կալվածքները. մասնավորապես Անիի և Բջնին: Ինչպես վկայում է

շանը²¹, Գ. Հովսեփյանը²², Հ. Մանանդյանը²³ և Լ. Խաչիկյանը²⁴։ Ամբողջապես հիշատակարանը մինչև այժմ չի հրատարակվել։

Պատմագրական տեսակետից արժեքավոր լինելուց բացի հիշատակարանը կարևոր է Անիի պատմությանն առնչվող մանրամասների առումով։ Նախ ինքնին ուշագրավ է, որ վերը նշված ավերիչ արշավանքից հետո, Ասիլը չի հետևել փախչող Շահնշահ III-ին, այլ մնացել է Անիում, ձեռագիր ն.լի-րել Առաքելոց եկեղեցուն, որը կոչում է իր «սեփական հայրենի եկեղեցին»։ Հիշատակարանում նշվում է, որ Ասիլն ու իր կինը շինարարական գործեր են ծավալել Շիրակում և Անիում, նվերներ տվել վանքերին, օգնել տնանկներին։ Թվարկվում են Ասիլի չորս զավակները, որոնք ըստ երևույթին այլ վայրերում էին գտնվում։ Շահնշահ III-ի և Ասիլի փոխհարաբերությունների մասին է վկայում հիշատակարանի մի հատվածը, որից պարզ է գառնում վերջինիս նշանակալից դերը Զաքարյանների տան տնտեսական գործերում։ Ասիլի հիշատակարանը զբաղեցնում է ձեռագրի երեք էջ (264ա—265ա), գրված է կանոնավոր բոլորգրով։ Նկատի ունենալով Ասիլի հիշատակարանի՝ Անիի պատմության համար ունեցած արժեքը, հարկ ենք համարում այն մեջ բերել ամբողջությամբ։

264ա «Կամակցութեամբ անկարօտ ապենիալ թագաւորին Քրիստոսի և մարդասէր բարերարին և ողորմութեամբ սրբուհոյ Աստուածածնին և ամենայն սրբոց երկնաւորաց և երկրաւորաց։

Արդ, նորոգեցաւ հրաշափառ Աւետարան այս հրամանաւ և արեւմտ հաւատարիմ ծառայիցն Քրիստոսի պարոն Ասիլին և ամենաւարճենալ ամուսնոյ իւրոյ Ընուգ Խաթունին՝ սիրողաց աստուածաշունչ կտակաւանաց, յայս դառն դրժընդակ և յանբարի ժամանակիս, որ իբրեւ ըղնաւաբեկ կամք սրտաբեկ թէ՛ զինչ լինելոց եմք։ Որ զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին գաւառն քաղաքին Անու։ Եւ զաղետս և զոր ինչ արարին ի վանս և ի գեաւդս և ի գաւառիս ո՞ր բերան պատմէ կամ ո՞ր լեզու խօսի, քանզի անխնայապէս գործեցին զիրեանց չարիս ի հաւատացեալս սուրբ երրորդութեանն։ Սատակեցին առաջի ծնողաց զտղայսն և առաջի տղայոց զծնողսն։ Եւ զորս ըմբռնեալ տանէին գերիս՝ բանդից և տանջանաց մատնեալ։ Եւ բարերարն Աստուած տեսեալ և անտես առնէր վասն անբաւ չարեաց մերոց։ Որոց զլուիս աթապակ և մեծ սպասալար Շահնշահ, որ հագիւ կարաց գերծանիլ ի ձեռաց թշնամեացն։ Վասն որոյ տէր Աստուած արասցէ զնայ ընդ յերկայն աւուրս, զի վերստին կանգնեցցէ դանկեալ ազգս քրիստոնեից և լուսաւորեցցէ զխաւարել եկեղեցիքս)։

264բ Արդ, յայս դառնութեան ժամանակիս բարէփարթամ և աստուածահաճոյ և բարէպաշտ ծառայքս Աստուծոյ Ասիլս և բարի լծակիցն իւր Ընուգ Խաթունն բարեպաշտութեամբն իւրեանց լցին զտուն Շիրակս և մայրաքաղաքին Անոյ շինվածօք և արդար դատաստանօք և տրօք տնանկաց և այլ ամենայն ընծայիւք զվանս և զեկեղեցիս զարդարեցին որպէս օրէն է աստուածասէր քրիստոնէից։

Մանաւանդ ևս առաւել ստացան զհրաշափառ և զսուրբ Աւետարանս ի հալալ և յարդար վաստակոց իւրեանց, ի վայելումն ինքեանց և ծնողաց և աստուածապարգև և նորաբողբոջ զաւակաց իւրեանց՝ Բեսունինն, Խութլուքուդին, Թայլիկին և Էսլունին։ Զորս արժանի արասցէ զնոսա տէր Աստուած փառաց իւրոց, զերծուցցէ զնոսա տէր Աստուած

Բջնիի վիմագրերից մեկը, Շահնշահ III-ին հաջողվում է վերադարձնել Բջնին, սակայն Անին իր շրջակայքով այլևս չի աղատագրվում (Հայ Ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 18—19)։

21 Ղ. Ա. Լիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 112։

22 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 15։

23 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 343։

24 Հայ Ժողովրդի պատմություն, IV, էջ 18։

ի բանդից և ի տանջանաց և ելս տացէ նոցա գալ խաղաղութեամբ ի տեղիս իւրեանց:

Եւ ուրախ արասցէ տէր Աստուած զստացող սորայ զպարոն Ասիլն, զի բաղում վիշտ և տրտմութիւնս կրեաց վասն աւերման մայրաքաղաքին Անու: Քանզի իբրև զտղայս ծնողաբար սնուցեալ էր զնոսայ և հաւատարիմ կացել ի վերա տանն պատրոն աթապակ Շահնշահին և ամենայն կաղմութեան տան իշխանութեան նորայ, ի ձեռս նորա եղևալ և դամենայն հոգս ըստ Աստուծոյ հաճոյիցն հոգայր և հաւանեցուցանէր, որք ընդ ձեռամբ պատրոն Շահնշահի էին: Եւ ոչ ոք տրտունջ և աղաղակ բողոքէին առ Աստուած, այլ գոհութիւն մատուցանէին Աստուծոյ: Տէր Աստուած տացէ սմա վարձս բարեաց, ամէն:

265ա Արդ, մեր՝ մեղուցեալ և անարման ծառայքս Աստուծոյ Ասիլս և ամուսին իմ Բոուզ Խաթունս լուաք զհրամանս սուրբ պատվիրանացն Աստուծոյ, թէ՛ Երանի որ ունի զաւակ ի Սիոն և ընտանի ի վերինն Երուսաղէմ, ստացաք զսուրբ Աւետարանս և տվաք զսայ ի մեր սեփհական հայրենի եկեղեցին՝ ի յԱնու Սուրբ Առաքեսպէ՛ն՝ յիշատակ մեզ և ծնողաց մերոց և զաւակաց մերոց Բեսունինին, Խուրլուպուղին, Քալիկին, Էսլունին և այլ ամենայն արեան մերձակայից՝ կենդանեաց և նրն-ջեցևոց:

Արդ, աղաչեմք զմանկանց Սուրբ Առաքելոցս, զի յամենայն աւաղ հինգշաբթի ըմեր յիշատակարանս կարգայք և ասէք հանգստեան շաբաթան՝ Երանի ում թող և Քրիստոս որդի, և ասաջիք տէր Աստուած Յիսուս Քրիստոս ի քո ահաւոր և միւս անգամ զալստեանդ, յորժամ բանք սպառին է գործք թագաւորեն, արդարքն պսակին և մեղաւորքն մատնին ի հուրն անշէջ, յայն ժամ ողորմեալ ստացողի սորա Ասիլին և Բոուզ Խաթունին, Պեսունինին և Խուրլուպուղին, Քալիկին և Էսլունին, ամեն:

Եւ եթէ ոք հեռացուցանել ջանա զսա ի Սուրբ Առաքելոցն, կամ գողութեամբ կամ այլ պատճառանօք, մասն զՅուդայի առցէ և զխաչհանուցն: Եւ եթէ ոք անդաստառակ և անխնամ պահէ՝ մեր մեղացն պարտական լիցի:

Գրեցաւ յիշատակարանս ի թվ. ՊՁ (1357), ձեռամբ անիմաստ գրչի և ստոյք մեղաւորի Ներսէս փանաբի քարտուղարի, յիշել աղաչեմ:

Հիշարժան է, որ բացի սույն հիշատակարանից, Ասիլի մասին նաև այլ տեղեկութիւններ են պահպանվել, որոնք վկայում են, որ նա իրոք շինարարական գործեր է կատարել և եղել է բարձր պաշտոնյա: Անիում հայտնաբերված շինարարական բնութիւն վերջին թվակիր արձանագրութիւնը փորագրված է 1342 թ. Ս. Փրկչի եկեղեցու պատին: Այնտեղ ասվում է, որ աթաբեկ Վահրամ Զաքարյանը հրամայել է նորոգել եկեղեցու գմբեթը, իսկ գործն իրագործել է վերջինիս հրամանով քաղաք եկած Գրիգորի որդի Ասիլը²⁵: Իսկ «Բագնայրի Ավետարանի»²⁶ XIV դարի կեսերին գրված մի հիշատակարանում Անիի քաղաքացի Պարոնը հալոնում է, որ նորոգել է տվել ձեռագիրը և տեղեկութիւններ հաղորդում իր տոհմի՝ մասնավորապես հոր և եղբոր մասին. «...բարեպաշտ ոմն Պարոն անուն՝ ի մայրաքաղաքէս Անու, որդի Գրիգորոյ մականուն խուցես, որ էր առաջնորդ և հիմն քաղաքիս, տեսի սուրբ Աւետարանս... և նորոգեցի զսայ...: Յիշեցէք և զկենդանիս Պարոնին՝ զբարեպաշտ և

25 «...ես անապակ Վահրամ... վերստին նորոգեցի զկոմբեթ Սուրբ Փրկչիս... Արդ ես Ասիլս, որդի Գրիգորո, առաքելոս պատրոնին հրամանաւն աթաբակ Վահրամ եւ էկել կատարեցի մեծ ջանիս եւ աշխատութեամբ զհրամանելս ինձ» (Դիվան հայ վիճագրութեան. պր. I, Երևան, 1966, էջ 44, № 125):

26 ՄՄ, ձեռ. № 1519: Չեռագիրը գրվել է 1332 թ. Հոռոմսոսում, Իզնատիոս գրչի ձեռքով, որից հետո պատվիրատու Խոռասի կողմից նվիրվել է Բագնայրի վանքին, ուր երկար ժամանակ պահպանվել է հետագայում կոչվել է «Բագնայրի Ավետարան»:

8 «Հանդես», № 3

զատուածատէր զեղբայրն զԱսիլն, որ է առաջնորդ և հիմն քաղաքիս Անու,
իրաւարար և արդարադատ ամենայն քաղաքին...»²⁷:

Ինչպէս տեսնում ենք, Ասիլը, որը հավանաբար Գրիգոր Խուցեսի ավագ
որդին էր, Անիում ժառանգել է հոր պաշտոնը: Համադրելով Ս. Փրկչի Եկեղե-
ցու արձանագրության (1342 թ.), Պարոնի հիշատակարանի և Ասիլի 1357 թ.
հիշատակարանի տվյալները, գտնվում ենք այն եզրակացության, որ Գրիգորի
որդի Ասիլը XIV դարի կեսերին Զաքարյանների իրավական իշխանության
գործնական իրազործողն է եղել Անիում:

Քաղաքում գրված հաջորդ հիշատակարանը վերաբերում է 1379 թ., պահ-
պանվել է Ղ. Փիրղալեմյանի անտիպ աշխատության մեջ (նշխարք պատմու-
թյան Հայոց, ՄՄ, ձեռ. № 4515): Ուշադրության արժանի է այն հանգամանքը,
որ հիշատակարանը գրված է ոչ թե հետագայի ստացողի կողմից, այլ պայման
է ձեռագրի (ն.գնտարան) գրչության մասին: «Գրեցաւ սուրբ Անտարանս ի
թուականիս հայոց Պրկ (1379) ի քաղաքիս յԱնի, ընդ հումանեաւ Սրբոյն
Գէորգաւ զորավարի: Արդ որք հանդիպիք սուրբ Անտարանիս պարգայով...
յիշիցէք մեղապարտ գծողս Թորոս»²⁸:

Ղ. Փիրղալեմյանի կողմից հիշատակարանն արտագրվել է 1870 թ., այժմ
ձեռագրի գտնվելու վայրն անհայտ է²⁹:

Թորոս գրչի հիշատակարանը վկայությունն է այն բանի, որ XIV դարի
վերջերին քաղաքում չէր մարել մշակութային կյանքը: Այդ ժամանակաշրջա-
նում Անիում գրչությանը էր զբաղվում նաև եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփո-
րիկը³⁰, որը, սակայն, XV դարի սկզբներին ստիպված էր հեռանալ հարազատ
քաղաքից (ձեռագրեր է ընդօրինակել Սանահինում, վրացական Խմոզիի ամ-
րոցում, եղել է գրչության ուսուցիչ)³¹:

Այսպիսով, XIV դարի հայերեն ձեռագրերի վերը ներկայացված հիշա-
տակարանները բավական նյութ են պարունակում Անի քաղաքի ու անեցիների
վերաբերյալ և փոքրաթիվ վիճաբերի հետ միասին հանդիսանում են քաղա-
քի պատմության նշված շրջանի մասին վկայող միակ սկզբնաղբյուրները:

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ XIV ВЕКА О ГОРОДЕ АНИ И ОБ АНИЙЦАХ

К. А. МАТЕВОСЯН

Резюме

О городе Ани в XIV веке сохранились немногочисленные письменные источники. Среди них—памятные записи рукописей, содержащие примечательные сведения и факты как о самом городе, находившемся под игом монголов, так и о тех анийцах, которые переселялись в другие места. Наряду с уже изданными памятными записями в статье рассматриваются еще четыре, впервые публикуемые здесь частично или полностью. Это памятные записи Мкртича Анеци (переписчик Ованес, Матенадаран им. Маштоца, № 9450, с. 374б), парона Асила (переписчик Нерсес, ММ № 6764, с. 164а—165а), а также Акопа и Тороса (взяты из неизданного труда Г. Пиргалемяна, ММ № 4515, с. 69, 106). Памятные записи, оставленные очевидцами, в значительной степени дополняют наши сведения о городе Ани и о его жителях в XIV веке.

²⁷ Գ. Հովսեփյան. Հիշատակարանը ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 892:

²⁸ ՄՄ, ձեռ. № 4515, թ. 106, հրատարակվում է առաջին անգամ:

²⁹ Զիւրաբյանը, որ ձեռագիրը ոչնչացած լինի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, սանավանդ որ ցոնվելիս է եղել վասսալորականում:

³⁰ Ժ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 484—485:

³¹ Կ. Մաթևոսյան. Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը. «Էջմիածին», 1985, № 8: